ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 97 - 98 (16594) ՇԱԲԱԹ, 9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

«ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ՝ ԲԱԶՄԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՈՒԺԵՂ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Դեկտեմբերի 4-ին Թբիլիսիում աշխատանքն սկսեց «Եվրամիությունը եւ գործընկերները՝ բազմերանգություն ուժեղ միասնության համար» միջազգային խորհրդարանական խորհրդաժողովը, որի աշխատանքին մասնակցեց 17 երկրի խորհրդարանական պատվիրակություն: Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցեցին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետը, խոսելով երկրում իրականացվող բարեփոխումների մասին, հայտարարեց, որ դրանք մեծապես նպատակամղված են Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրով ծրագրված նպատակներին: Նրա խոսքով, Վրաստանն Արեւելյան գործընկերության մյուս անդամների հետ 2020 թվականի համար ծրագրել է

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՇՎԵՅՑԱՐԻԱ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Դեկտեմբերի 4-6-ը պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Շվեյցարիայի նախագահ Դորիս Լեյթհարդը:

Պաշտոնական դիմավորման արարողությունից հետո, Թբիլիսիի Հավլաբարի նստավայրում, տեղի ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Շվեյցարիայի նախագահ Դորիս Լեյթհարդի առանձնազրույցը, որին հաջորդեցին պատվիրակությունների ընդլայնված կազմով բանակցությունները:

Ինչպես նշեցին նախագահի մամլո ծառայությունում, հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները: Վրաստանի նախագահը հյուրին ներկայացրեց Վրաստանում իրականացվող եւ իրականացվելիք բարեփոխումները՝ ուղղված երկրի ներքին ու արտաքին քաղաքական-տնտեսական քաղաքականու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՀԱՍՏԱՏՎԵԾԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեկտեմբերի 7-ին Վրաստանի խորհրդարանը, երեք ընթերցումով, հաստատեց կառավարության վերակառուցման հետ կապված օրենսդրական փոփոխությունները:

Խորհրդարանի արտահերթ նիստում քննարկվեց 99 օրինանախագիծ: Պատգամավորները յուրաքանչյուր օրինանախագծի հարցով անցկացրին քվեարկություն: Ընդդիմությունը խիստ քննադատության ենթարկեց փոփոխությունները, իսկ խորհրդարանական մեծամասնության որոշակի մասը դժգոհություն հայտնեց բնապահ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԱԴՐԱՄ

ԿՈԲԱ ԳՎԵՆԵՏԱՁԵ. «ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԻ ՎՐԱ ԱԶԴՈՒՄ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ԳՈՐԾՈՆՆԵՐ»

Դեկտեմբերի 4-ին Վրաստանի Ազգային բանկի նախագահը Վրաստանի խորհրդարանի ֆինանսաբյուջետային կոմիտեին ներկայացրեց դրամավարկային եւ տարադրամային քաղաքականության հիմնադրույթները: Ազգային բանկի ղեկավարը պատասխանեց նաեւ լարիի կուրսի վերաբերյալ խորհրդարանականների հարցերին:

Խոսելով վերջին ժամանակներում լարիի արժեզրկման մասին՝ Կոբա Գվենետաձեն նշեց, որ փոխանակման լողացող կուրսի պայմաններում կանխագծումների կատարումը բացարձակապես անհնար է:

- Բացի այդ, ինչպես հայտնի է, առկա են տարբեր գործոններ, որոնք ազդեցություն են գործում լարիի կուրսի վրա, թեպետ կան նաեւ գործոններ, որոնց մասին մենք տեղեկություն չունենք,- հայ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դեկտեմբերի 7-ին ողջ հայ ժողովուրդը նշեց 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի 29-րդ տարելիցը եւ հարգանքի տուրք մատուցեց տարերքի զոհերի հիշատակին:

Դեկտեմբերի 7-ին Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը 1988 թվականի երկրաշարժի 29-րդ տարելիցի կապակցությամբ այցելել է Գյումրի: Կարեն Կարապետյանը ժամը 11:41-ին ծաղիկներ է դրել Գյումրիի «Սուրբ Ամենափրկիչ» եկեղեցու մոտ տեղադրված 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին եւ մասնակցել մատուցվող պատարագին:

Երկրաշարժի զոհերի հիշատակի հոգեհանգստյան արարողություններ են կատարվել Հայաստանի բոլոր եկեղեցիներում:

ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 29-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Դեկտեմբերի 7-ին, Թբիլիսիի «Սուրբ էջմիածին» եկեղեցում լուսարարապետ Տեր Մանուկ քահանա Ջեյնալյանը կատարեց հոգեհանգստյան կարգ: Հոգեւոր հայրը անդրադարձ կատարեց Հայաստանում աղետաբեր երկրաշարժի ավերածություններին, արժեւորեց աշխարհի երկրների արձագանքն ու օգնությունը, առանձնահատուկ ընդգծեց հարեւան Վրաստանի եւ վրաց ժողովրդի օգնությունը:

Նույն օրը, Վրաստանում Հայաստանի նորանշանակ, արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, դեսպանության աշխատակիցների ուղեկցությամբ, Սուրբ էջմիածին եկեղեցում հարգանքի տուրք մատուցեց երկրաշարժի զոհերի հիշատակին, ապա այցելեց «Հայարտուն» մշակութային կենտրոն:

Դեկտեմբերի 7-ին, Ախալքալաքիի «Սուրբ Խաչ» եկեղեցում արարողությանը մասնակցեցին Ախալքալաքիի քաղաքապետ Յուրի Ունանյանը եւ սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը: Նինոծմինդայի «Սուրբ Սարգիս» եկեղեցում հոգեհանգստյան արարողությանը ներկա էին Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանն ու սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը:

Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին հոգեհանգստյան արարողություններ մատուցվեցին նաեւ Բաթումիում, Ծալկայում, Վրաստանի հայաբնակ մյուս վայրերում:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

Մ.ՋԱՆԵԼԻՋԵԻ ԵՎ Է. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Վիեննայում ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի 24-րդ նիստին մասնակցող Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն հանդիպում ունեցավ Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Նախարարներն անդրադարձան երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերի լայն շրջանակին, մտքեր փոխանակեցին երկու երկրների ղեկավարների միջեւ ձեռքբերված համաձայնությունների կատարման ընթացքին:

Հանդիպման ընթացքում, քննարկվեցին բարձր մակարդակի փոխայցելությունների նախապատրաստական աշխատանքները:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

«ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ՝ ԲԱՂՄԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՈՒԺԵՂ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եվրամիության հետ համագործակցության համար քսան նոր նախագիծ: Գիորգի Կվիրիկաշվիլու հավաստմամբ, չնայած արտաքին եւ ներքին սպառնալիքներին, Վրաստանը հստակորեն ընթանում է եվրահինտեգրման ուղիով: Նրա խոսքով, Եվրամիության տրանսֆորմացման հզորությունը եւ եվրոպական արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականությունը դարձել են Վրաստանում իրականացվող բարեփոխումների ու արդիականացման անկյունաքարը, երկրի արտաքին եւ ներքին քաղաքականության անկապտելի մասը, որի նպատակը ժողովրդավարական զարգացած եվրոպական պետության շինարարությունն է:

- Մեր նպատակն է համատեղ ջանքերով պահպանել միասնական հզոր Եվրոպա, որը, համապատասխան պայմանների առկայության դեպքում, պատրաստ կլինի դռները բացել Վրաստանի ու եվրոպական մյուս պետությունների համար,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Իր հերթին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն խոսեց այն համատեղ միջոցառումների մասին, որոնք Վրաստանի օրենսդիր եւ գործադիր իշխանությունները համատեղ իրականացնում են Եվրամիության Ասոցիացման համաձայնագրի պահանջների հաջող կատարման համար:

ՎՐԱՍՏԱՆ - ՇՎԵՅՑԱՐԻԱ

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան կատարելագործմանը: Ինչպես նշեց նախագահը, տնտեսական քաղաքականությունը կողմնորոշված է ազատ, արդարացի ու կայուն զարգացմանը, եւ Վրաստանում իրականացվող բարեփոխումները նպաստում են երկրում ներդրումային միջավայրի բարելավմանը:

Կողմերն ընդգծեցին վրաց-շվեյցարական հարաբերությունների կարգավորումը, եւ Վրաստանում իրականացվող բարեփոխումները նպաստում են երկրում ներդրումային միջավայրի բարելավմանը:

Կողմերն ընդգծեցին վրաց-շվեյցարական հարաբերությունների երկկողմ համագործակցության խորացման առաջնահերթությունը, անդրադարձ կատարեցին նաեւ Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ Շվեյցարիայի կողմից իրականացվող միջնորդական գործառույթի հարցերին:

Այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հանդիպումը Շվեյցարիայի նախագահ Դորիս Լեյթարդի հետ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՆԱՏՕ-Ի ՄԻՆԻՍՏԵՐԻԱԼԻՆ

Դեկտեմբերի 5-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն Բրյուսելում մասնակցեց Հյուսիսատլանտյան դաշինքի արտաքին գործերի մինիստերիալին:

Այցի շրջանակներում, Միխեիլ Ջանելիձեն հանդիպումներ ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի, ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնի, ՆԱՏՕ-ի անդամ երկրների ԱԳ նախարարների հետ:

Մինիստերիալի շրջանակներում, անցկացվեց նաեւ ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովի նիստը, որտեղ քննարկվեցին ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման գործընթացի եւ ալյանսի հետ Վրաստանի երկկողմ համագործակցության հետ առնչվող հարցեր, Սեւ ծովի անվտանգության գործընթացում Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության հեռանկարները: Ըստ Ստոլտենբերգի գնահատման, Վրաստանը ՆԱՏՕ-ի մերձավորագույն գործընկերն է: Նա ընդգծեց այն առաջընթացը, որը Վրաստանում արձանագրվել է վերջին մի քանի տարիների ընթացքում տարբեր ոլորտների բարեփոխման եւ արդիականացման ուղղությամբ:

Բրյուսելում, ՆԱՏՕ-ի արտաքին գործերի մինիստերիալի շրջանակներում, տեղի ունեցավ Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեի եւ ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնի հանդիպումը:

Ինչպես հանդիպման ավարտին հայտարարեց ԱՄՆ պետքարտուղարը, ինքը Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարարի հետ ունեցավ արդյունավետ հանդիպում, որտեղ քննարկվեցին վրաց-ամերիկյան երկկողմ, ինչպես նաեւ ալյանսի շրջանակներում ծավալվող համագործակցությանն առնչվող հարցեր:

- Մենք լրիվությամբ պաշտպանում ենք Հյուսիսատլանտյան ալյանսին Վրաստանի ապագա անդամակցությունը,- հանդիպման ավարտից հետո հայտարարեց Ռեքս Թիլերսոնը:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՀԱՍՏԱՏՎԵԾԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պանության նախարարության չեղարկման կապակցությամբ:

Ինչպես արդեն նշել ենք, կառավարության վերակառուցման կապակցությամբ, օրենսդրական փոփոխությունների փաթեթը մշակվել էր գործադիր իշխանության կողմից եւ նախատեսում էր 18 նախարարություններից պահպանել 14-ը: Մասնավորապես, Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցով պետնախարարի գործառույթները փոխանցվում էին արտաքին գործերի նախարարությանը, իսկ բնապահպանության նախարարությունը միացվում էր գյուղատնտեսության նախարարությանը: Մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարարության իրավասության ներքո է անցնում սպորտի եւ երիտասարդության հարցերով գործառույթը, իսկ էկոնոմիկայի եւ կայուն զարգացման գերատեսչության իրավասություններին ավելացվում են էներգետիկայի նախարարության եւ բնական ռեսուրսների կառավարման գործառույթները: Միաժամանակ, ներքին գործերի նախարարությունում իրականացվող վերակառուցման արդյունքում, արտակարգ իրավիճակների կառավարման գործակալության եւ պետական անվտանգության ու ճգնաժամերի կառավարման խորհրդի բազայի վրա ստեղծվում է արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ 93 ՏՈԿՈՍԻ ՊԱՏՃԱՌԸ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության նախականխման եւ ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկողության համակարգման խորհրդի ընդլայնված նիստում քննարկեցին ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկ գործոնների ուսումնասիրության արդյունքները:

Ինչպես նշվեց նիստում, ծխախոտի եւ ալկոհոլի չարաշահումը, ինչպես նաեւ պասիվ կենսակերպը հանդիսանում են ոչ վարակիչ հիվանդությունների ազդակներ, որոնք, իրենց հերթին, դառնում են երկրում մահացության 93 տոկոսի պատճառը: Ուսումնասիրության համաձայն, 2010-2016 թվականներին ծխախոտ օգտագործողների թիվը 55,5 տոկոսից հասել է 59,2 տոկոսի: Վերոնշյալ ժամանակահատվածում, 78,58 տոկոսից մինչեւ 89,7 տոկոսի է հասել նաեւ ալկոհոլի օգտագործումը:

Ուսումնասիրության արդյունքում, բացահայտվել է նաեւ նախականխման նպատակով բժիշկներին դիմելու թվաքանակի նվազեցումը: Կրկին առաջնահերթային հիմնախնդիր է հանդիսանում ավելորդ քաշը եւ աղի չարաշահումը:

Ոչ վարակիչ հիվանդությունները հայտնի են նաեւ որպես քրոնիկական հիվանդություններ, եւ 21-րդ դարի համար առողջապահության նշանակալի մարտահրավեր են: Որպես օրենք, այդ հիվանդությունները տեւական են եւ հանդիսանում են գենետիկական, ֆիզիոլոգիական, էկոլոգիական եւ առօրեական գործոնների համակցում: Ոչ վարակիչ հիվանդություններից են սիրտ-անոթային հիվանդությունները (ինչպիսիք են ինֆարկտը եւ կաթվածը), ուռուցքային հիվանդությունները, քրոնիկական թոքային հիվանդությունները եւ այլն:

Նշենք, որ Վրաստանի առողջապահության նախարարությունը 2015 թվականին հիմնել էր ոչ վարակիչ հիվանդությունների նախականխման եւ վերահսկողության համակարգման խորհուրդ, որպեսզի վերահսկողություն սահմաներ եւ ծրագրեր հիվանդությունների կանխման միջոցառումները:



ՎԱՏԻԿԱՆ

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ՓՈԽՈՒՄ Է «ՀԱՅՐ ՄԵՐ» ԱՂՈԹՔԻ ԲԱՌԵՐԸ

Հռոմի Ֆրանցիսկոս Պապը հանդես է եկել Տերունական աղոթքը փոխելու օգտին:

Քահանայապետի կարծիքով, ելնելով աղոթքի անգլերեն եւ մի շարք այլ լեզուներով թարգմանությունից՝ կարելի է կարծել, թե «Աստված ընտրում է՝ փորձության ենթարկե՞լ մեզ, թե՞ ոչ»: «Դա լավ թարգմանություն չէ, որովհետեւ ակնարկում է, որ Աստված դրդում է գայթակղության»,- հայտարարել է Հռոմի պապը: Ֆրանցիսկոս պապը հիշեցրել է, որ Ֆրանսիայում արդեն փոխել են աղոթքի տեքստը, որն այժմ ասում է «թույլ մի տուր մեզ փորձության ենթարկվել»:

Ավետարանի համաձայն, իր աշակերտներին տվել է Հիսուս Քրիստոսն ի պատասխան նրանց՝ աղոթք սովորեցնելու խնդրանքի: Բնագրի լեզվում, աղոթքը կորստի է մատնվել, եւ պահպանված տեքստերից ամենահները գրված են հին հունական կոյնեով:

ԱՄՆ

ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՆ ԵՐՈՒՍԱՂԵ՞Մ

Դեկտեմբերի 6-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը որոշում ընդունեց Իսրայելում ԱՄՆ դեսպանությունը Թել Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու եւ դրանով Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու մասին:

Ընդունած որոշման կապակցությամբ, մի շարք պետություններում ԱՄՆ դեսպանությունների աշխատակիցներն արտասահմանում գտնվող ամերիկացիներին հայտնել են նրանց անվտանգության հնարավոր սպառնալիքի մասին: Այդ հայտարարություններով հանդես են եկել, մասնավորապես, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Իտալիայում եւ Բելառուսում գործող ԱՄՆ դեսպանությունները: Նշել են, որ Թրամփի որոշումը «կարող է առաջացնել բողոքներ, եւ դրանցից մի քանիսը կարող են հանգեցնել բռնության»: Համանման նախազգուշացումներ են զետեղված Աֆղանստանում, Իսրայելում, Հորդանանում եւ Թուրքիայում ԱՄՆ դեսպանությունների կայքերում:

ՊԱՂԵՍՏԻՆ

ԳՈՐԾԱԴՈՒԼ՝ Ի ՆՇԱՆ ԲՈՂՈՔԻ

Համընդհանուր գործադուլը, որը «ցասման օրվա» շրջանակներում անցկացվում է ի նշան Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու Վաշինգտոնի որոշման դեմ բողոքի, կաթվածահար վիճակ է ստեղծել Հորդանան գետի արեւմտյան ափին:

Ավելին, Պաղեստինի ղեկավարությունը հրաժարվում է հանդիպել ԱՄՆ-ի փոխնախագահ Մայքլ Փենսի հետ՝ի նշան Միացյալ Նահանգների կողմից Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու դեմ բողոքի:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐՈՎ ՀԱԳԵՑՎԱԾ ԱՅՑԸ

Թուրքիայի նախագահ Էրդողանի այցը Հունաստան, որն ակնկալվում էր, թե շրջադարձային կլինի՝ հաշվի առնելով վերջին 65 տարվա ընթացքում Թուրքիայի նախագահի կողմից իրականացվող առաջին այցի կարեւորությունը, վերածվել է «լեզվակռվի»: Ռեջեփ Թայիփ Էրդողանը մի կողմ է դրել դիվանագիտական նրբանկատությունն ու մի շարք «կարմիր գծեր» հատել:

Մասնավորապես, Էրդողանը պատմական այցի առաջին օրը կոպտորեն երեւան է հանել վաղուց մոռացված վեճերը, այդ թվում՝ 1923 թ. Լոզանի համաձայնագիրը:

Բացի այդ, Էրդողանը հայտարարել է, որ Աթենքը պետք է վերադարձնի Թուրքիայում հեղաշրջման փորձից հետո Հունաստան փախած ութ թուրք զինվորականի:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲՅՈՒՋԵ - 2017

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՍՏԱՏԵՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ

Դեկտեմբերի 4-ին Վրաստանի խորհրդարանը, իր լիագումար նիստում՝ 89 կողմ ձայնով, հաստատեց 2017 թվականի պետական բյուջեի փոփոխությունները, ըստ որի, տնտեսական աճի կանխագծումը 4-ից հասցվում է 4,5 տոկոսի:

Փոփոխությունների համաձայն, բյուջետային մուտքերն ավելանում են 30 միլիոն լարիով եւ կազմում 11,4 միլիարդ լարի, իսկ բյուջետային ներդրումներն ավելանում են 305 միլիոն լարիով՝ հասնելով 11,7 միլիարդ լարիի: Հարկային մուտքերը ավելանում են 160 միլիոն լարիով եւ կազմում 8,9 միլիարդ լարի: 46,7 միլիոն լարիով ավելանում են նաեւ օտարերկրյա դրամաշնորհներից ստացվող եկամուտները, այն, ընդհանուր առմամբ, կկազմի 331,2 միլիոն լարի:

Իրականացված փոփոխությունների համաձայն, ուք նախարարությունների բյուջետային մուտքերն ավելացվում են: Մասնավորապես, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը լրացուցիչ կստանա 106 միլիոն լարի եւ գերատեսչության ֆինանսավորումը կհասնի 476 միլիոն լարիի: Գյուղատնտեսության նախարարության ֆինանսավորումն ավելացվում է 65 միլիոնով եւ կազմում՝ 323 միլիոն լարի: Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության բյուջեն ավելացվում է 30 միլիոն լարիով եւ հասցվում 1,3 միլիարդ լարիի: Սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարարությունը լրացուցիչ կստանա 10 միլիոն լարի, եւ ֆինանսավորումը կհասցվի 146 միլիոնի: Էներգետիկայի նախարարությունը լրացուցիչ կստանա 65 միլիոն, արդյունքում՝ գերատեսչության բյուջեն կկազմի 197,3 միլիոն լարի: Բռնագաղթված անձանց եւ փախստականների նախարարության բյուջեն ավելացվում է 15 միլիոն լարիով, եւ այն հասցվում է 99,8 միլիոն լարիի: 5 միլիոն լարիով ավելացվում եւ 115 միլիոն լարիի է հասցվում արտաքին գործերի նախարարության բյուջեն, իսկ ներքին գործերի նախարարության ֆինանսավորումն ավելացվում է 14 միլիոնով, ընդհանուր առմամբ, բյուջեն կազմելու է 599 միլիոն լարի:



ԱՊՕՐԻՆԻ ԱՆՏԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Ընթացիկ տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Սամցխե-Ջավախեթիի երկրամասային ոստիկանության դեպարտամենտի եւ պարեկային ոստիկանության աշխատակիցները բացահայտել են ապօրինի անտառահատման 11 փաստ:

Ինչպես տեղեկացրել է ՆԳ նախարարության մամլո ծառայությունը, Բորժոմիի, Ադիգենիի, Ախալցիխեի եւ Ասպինձայի մունիցիպալիտետներում իրավախախտում թույլ տված անձանցից բռնագրավվել է մեծ քանակությամբ ապօրինի հատված անտառանյութ:

ԾՐԱԳՐՎՈՒՄ է ՀԱՀ-Ի ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԱՎՏՈՄԱՏ ՀԱՄԱԿԱՐԳ

Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն ծրագրում է հավելյալ արժեքի հարկի (ՀԱՀ) վերադարձման ավտոմատ համակարգի ներդրում: Նրա պարզաբանմամբ, գործարարը էլեկտրոնային հայտարարությունը ներկայացնելուց հետո, աշխատանքային 5-7 օրվա ընթացքում, կկարողանա ստանալ ՀԱՀ գումարի ավելցուկը:

- Դա նշանակում է, որ շուրջ 500 միլիոն լարի լրացուցիչ կվերադարձվի գործարարներին,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(8 դեկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.645	2.715
ԵՎՐՈ	3.079	3.212
ՌՈՒԲԼԻ	0.042	0.049
ԴՐԱՄ	0.0042	0.0060

Դեկտեմբերի 1-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0,035 լարիով:

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԴՐԱՄ

ԿՈԲԱ ԳՎԵՆԵՏԱՁԵ. «ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԻ ՎՐԱ ԱԶԴՈՒՄ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ԳՈՐԾՈՆՆԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տարարեց Ազգային բանկի նախագահը եւ հավելեց, որ Ազգային բանկը պարտավորություն է վերցրել հաջորդ տարվա համար պահպանել գների կայունությունը եւ արժեզրկման մակարդակը՝ 3 տոկոսի սահմաններում: Դրա համար Ազգային բանկը կօգտագործի իր տրամադրության տակ գտնվող բոլոր հնարավորությունները:

- Վստահությամբ կարող եմ հայտարարել, որ հաջորդ տարի արժեզրկումը կնվազի: Դա նշանակում է, որ Ազգային բանկը պարտավորություն է ստանձնում պահպանել գների կայունությունը եւ արժեզրկման մակարդակը՝ 3 տոկոսի չափով, եւ, որ արժեզրկումը շատ ավելի ցածր կլինի, քան այս տարի էր,- ընդգծեց Կոբա Գվենետաձեն եւ հավելեց,- նպատակին հասնելու համար, Ազգային բանկը կօգտագործի բոլոր հնարավորությունները՝ դրամավարկային քաղաքականությունը, տոկոսադրույքները, ռեզերվների կառավարումն ու, անհրաժեշտության դեպքում, կայունացման միջոցառումները, գույքագրումը եւ այլն:

Այս տարի արժեզրկման հարցում մոտեցումը սխալ էր. ծրագրված 41 տոկոսի փոխարեն, ստացանք 6,9 տոկոսի արժեզրկում, հաջորդ տարվա համար Ազգային բանկը խոստանում է, որ արժեզրկման մակարդակը կրկնակի կնվազի:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ է

Վրաստանի Ազգային բանկը բնակչությանը կոչ է անում առանձնակի զգուշություն եւ ուշադրություն ցուցաբերել այն ընկերությունների նկատմամբ, որոնք բնակչությանն առաջարկում են իրենց միջոցները ներդնել ֆինանսական մեծ ռիսկեր պարունակող գործարքներում:

Ինչպես նշված է Ազգային բանկի հայտարարության մեջ, դա վերաբերում է նաեւ այն ընկերություններին, ովքեր բնակչությանը կոչ են անում միջոցներ ներդնել էլեկտրոնային տարադրամային շուկաներում (FOREX) եւ մասնակցել օտարերկրյա տարադրամի առքուվաճառքով: «Նման ընկերությունները քաղաքացիներին թյուրիմացության մեջ գցելու նպատակով, կարող են իրենց անվանման մեջ օգտագործել «ֆինանսական» «բրոկերային», «ներդրումային» եւ այլ անվանումներ, ինչը չի նշանակում, որ այդ ընկերությունները հանդիսանում են ֆինանսական կառույցի հավաստագրված ներկայացուցիչը, եւ դրանց գործունեությունը կարգավորվում է Ազգային բանկի կողմից»,- ասված է Ազգային բանկի հայտարարության մեջ:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊ՝ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵՔ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԿ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԵՐԿՈՒՍԸ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ, ԻՍԿ ՄԵԿԸ՝ ԾՂԱԼՏՈՒԲՈՅՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին Վրաստանի բնակչությունը սարսռեց ողբերգական միջադեպի դաժանությունից: Այդ օրը փոխվիճաբանության արդյունքում Թբիլիսիի կենտրոնում, Խորավայի փողոցի թիվ 51 եւ առաջին փորձառնական դպրոցների աշակերտների միջեւ տեղի ունեցավ ընդհարում:

Ընդհարմանը Գ.Բ.-ն դանակի բազմաթիվ հարվածներ է հասցրել Լ.Դ.-ին եւ Դ.Ս.-ին, ապա երկու մեղադրյալները փախուստի են դիմել: Ստացած վնասվածքներից Լ.Դ.-ն մահացել է հիվանդանոցի ճանապարհին, իսկ Դ.Ս.-ն՝ երկրորդ օրը, հիվանդանոցում: 2017-ի դեկտեմբերի 2-ին իրավապահների կողմից Թբիլիսիում ձերբակալվել է Գ.Բ.-ն: Հաջորդ օրը, երկրորդ կասկածյալը հանձնվել է իրավապահ մարմիններին: Դեկտեմբերի 3-ին նրանց մեղադրանք է ներկայացվել:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարության իրավապահները Խորավայի փողոցում տեղի ունեցած սպանության գործի շրջանակներում, ձերբակալել են եւս 3 անձի: Ձերբակալվածների թվում աշակերտներից մեկի ծնող Թենգիզ Կալանդիան է: ՆԳՆ-ի հայտարարության մեջ ասված է, որ ձերբակալվածները թաքցրել են տեղի ունեցածը՝ կեղծ ցուցմունքներ տալով իրավապահներին:

Ներքին գործերի նախարարությունը չի բացառել, որ տեղի ունեցած հանցագործության վերաբերյալ հնարավոր է աճի հանցագործությունը թաքցնելու մեջ մեղադրվողների թիվը:

Նշենք, որ անչափահասի սպանություն կատարվեց նաեւ Ծղալտուբոյի շրջանի Օփշկվիթի գյուղում: Այստեղ, ինչպես տեղեկացրել է «Իմեդի» հառուստաընկերությունը, բջջային հեռախոսի համար սպանել են 17-ամյա դպրոցականի: Իրավապահները ձերբակալել են կասկածյալին: Սպանողը զոհվածի համադասարանցի 18-ամյա երիտասարդ է:

ՄԻԽԵԻԼ ՉԽԵՆԿԵԼԻ. «ՄԵՆՔ ԱՆՁԻՋՈՒՄ ՊԱՅՔԱՐ ՊԵՏՔ է ՄՂԵՆՔ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ»

Թբիլիսիի թիվ 51 հանրային դպրոցում տեղի ունեցած ողբերգական իրադարձության կապակցությամբ, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ՝ նշելով, որ պետք է անզիջում պայքար մղել բռնության դեմ:

Նրա խոսքով, համապատասխան մարմինները հնարավորինս անում են կարճ ժամանակահատվածում հետաքննությունն իրականացնելու համար: Միխեիլ Չխենկելին իր ցավակցությունը հայտնեց սպանվածների ընտանիքներին:

- Մեր երեխաների անվտանգությունը մեր գլխավոր շահն է: Նախարարության ներկայիս կարեւորագույն հոգսը աշխատանքի ուժեղացումն է, որպեսզի նման ողբերգությունները չկրկնվեն: Մենք անզիջում պայքար ենք մղելու բռնության դեմ: Մեր ջանքերը ներառելու են երկրի ողջ տարածքը, բոլոր դպրոցները, առանց բացառության,- հայտարարեց Միխեիլ Չխենկելին եւ հավելեց, որ դպրոցներում ուժեղացվելու է մանդատուրների դերը:

Նախարարի խոսքով, ներքին գործերի նախարարության հետ պայմանավորվածությամբ, դպրոցներում անվտանգության մոնիտորինգին կներգրավվի նաեւ պարեկային ոստիկանությունը: Ավելին, կրթության եւ գիտության նախարարի խոսքով, բոլոր դպրոցներում կգործեն մանկական հոգեբաններ:

- Քսանչորսժամյա աշխատակարգով կգործի հոգեբանական ծառայության թեժ գիծը: Որպեսզի առանց բացառության, ներառվեն բոլոր դպրոցները, արհեստավարժների հետ միասին հանրային կրթօջախներում կաշխատեն հոգեբանության բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրոսներն ու դոկտորանտները: Այդ առումով, մենք առանձնակի նշանակություն ենք վերապահում ծնողների ակտիվ մասնակցությանը: Դա նախատեսում է դպրոցական կյանքում ինչպես ծնողների ակտիվ ներգրավում, այնպես էլ՝ նրանց տեղեկատվական-խորհրդատվական անհրաժեշտ սպասարկման մատուցում: Մենք հոգալու ենք ոչ միայն հանցագործության կանխման, այլ, առաջին հերթին, այնպիսի իրավիճակի ստեղծման հարցում, որի այմաններում բռնությունն ու ագրեսիան անթույլատրելի են,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ նախարարությունը պատրաստ է համագործակցության հասարակայնության հետ:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Հայաստանի գլոբալիզացման եւ տարածաշրջանային հետազոտության կենտրոնի» ղեկավար Ստեփան Գրիգորյանի՝ թբիլիսյան «Ինտերպրեսնյուս» գործակալության թղթակից Կոբա Բենդելիանում տված հարցազրույցը՝ նվիրված ս.թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում Եվրամիության հետ Հայաստանի ծեւակերպած համապարփակ եւ ընդլայնված գործունեության համաձայնագրի պատճառների ու նպատակների մասին:

- Պարոն Ստեփան, Հայաստանը Եվրամիության հետ ստորագրել է շրջանակային պայմանագիր «Եվրամիության եւ Հայաստանի միջեւ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության մասին»: Նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ Երեւանը հաջողությամբ համատեղում է Եվրասիական միության անդամակցությունը եւ Եվրամիության հետ համագործակցությունը: Ակնհայտ է, որ Հայաստանը զգուշությամբ, սակայն Մոսկվայի համաձայնությամբ, իրականացնում է քայլեր Եվրոպայի ուղղությամբ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Հայաստանը որոշեց մերձենալ Եվրամիությանը, եւ, ենթադրաբար, Հայաստանի համար ի՞նչ նշանակություն կարող է ունենալ Եվրամիության ու Հայաստանի միջեւ ծեւակերպված համաձայնագիրը:

- Չեմ կարող ասել, թե որքանով էր Հայաստանը ստացել Մոսկվայից համաձայնություն, որ Եվրամիության հետ ծեւակերպեր համաձայնագիր, սակայն, ըստ իս, Մոսկվայում միանշանակորեն դժգոհ են տեղի ունեցածից: Հայաստանը սույն համաձայնագիրը ստորագրեց՝ ելնելով մի շարք պատճառներից: Հայաստանը ձգտում է իրականացնել այնպիսի քաղաքականություն, որի պայմաններում, անկախ նրանից, որ ինքը Եվրասիական միության անդամ է, կունենա մյուս կենտրոնների հետ համագործակցության հնարավորություն: Իմ կարծիքով, նման բազմավեկտոր քաղաքականությունը մեր արտաքին քաղաքականության համար բավականին նորմալ մոտեցում է: Նրանից հետո, երբ Հայաստանն անդամակցեց Եվրասիական միությանը, նման քաղաքականության իրականացման համար հավասարակշռությունն ակնհայտորեն խախտվեց:

Փաստ է նաեւ, որ Եվրասիական միությանն անդամակցությունը Հայաստանին ոչինչ չտվեց, ընդհակառակը, Եվրասիական միության անդամակցությամբ, Հայաստանը լուրջ կորուստներ ունեցավ: Խաղի այն կանոնները, որոնք Եվրասիական միությանը անդամակցելուց հետո աստիճանաբար ուժի մեջ են մտնում, Հայաստանի քաղաքացիների վրա դեռեւս դրական ոչ մի ազդեցություն չեն գործում:

Եվրասիական միությանը անդամակցության պատճառով, Հայաստանը լուրջ հիմնախնդիրներ ու թերացումներ ունեցավ, եւ Հայաստանի իշխանությունը ստիպված եղավ բազմավեկտոր քաղաքականության վերականգնման շրջանակներում իրականացնել քայլեր Եվրամիության ուղղությամբ:

Եվրամիության հետ ստորագրած համաձայնագիրը ներկայացնում է այն իրականությունը, որ Եվրասիական միության անդամակցությունը Հայաստանին կանգնեցրեց լուրջ հիմնախնդիրների առջեւ: Չնայած նրան, որ Հայաստանը Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիր չի ստորագրել, Մոսկվան, միեւնույն է, կասկածներ ունի եւ արտահայտում է իր դժգոհությունը:

- Եթե ճիշտ հասկացա, Հայաստանի կողմից Եվրոպայի ուղղությամբ իրականացված քայլերը թելադրված էին տնտեսական հիմնախնդիրներով եւ ոչ թե միտված այն արժեքներին, որոնք համարվում են եվրոպական:

- Եթե Հայաստանի իշխանության գործունեությանը մոտենանք տրամաբանության տեսանկյունից, ապա, այո', տնտեսական հիմնախնդիրներն այն գլխավոր շարժառիթն էին, ինչը իշխանությանը մղեց Եվրոպայի կողմը:

- Ելնելով այդ համաձայնագրից՝ ի՞նչ կարող է ստանալ Հայաստանը:

- Ես միայն թվարկեմ այն հարցերը, որոնք, ըստ իս, հանգուցային են. պայքար կոռուպցիայի դեմ, դատական համակարգի բարեփոխում, մարդու իրավունքների համակարգի կատարելագործում, այն արտադրությունների վերականգնում, որոնք գործում են Հայաստանի տարածաշրջաններում: Փաստորեն, դա նշանակում է հոգատարություն սոցիալական հիմնախնդիրների նկատմամբ: Բացի այդ, Եվրոպան Հայաստանին առաջարկում է անդամակցություն՝ միասնական օդային տարածքում: Դա ինքնին կնվազեցնի Հայաստանում ավիատոմսերի արժեքը, որոնց գինը այսօր Հայաստանում հնգապատիկ ավելի է Վրաստանի համեմատությամբ: Այլընտրանք են առաջարկում նաեւ էներգետիկայի ոլորտում: «Գազպրոմը» Հայաստանին գազը կրկնակի ավելի գնով է վաճառում, քան Վրաստանին, հիմա էլ՝ Ուկրաինային: Էներգետիկայի ոլորտում այլընտրանքի ծագումը մեզ կօգնի հաղթահարել այնպիսի բացասական երեւույթներ, ինչպիսին էներգետիկայում Ռուսաստանի մենիշխանությունն է: Նաեւ առաջարկում է սպասարկման ոլորտում ծագած հարցերի կարգավորում: Խոսքը վերաբերում է փոստային, էլեկտրոնային եւ մյուս տեսակի սպասարկումներին:

Իմ կողմից ներկայացրած ցուցակը բավականին տպավորիչ է: Գլխավորն այն է, որ շատ ոլորտներում Հայաստանի համար կծագեն այլընտրանքներ: Այն պայմաններում, երբ մենք այլընտրանք չունենք, հանդես է գալիս Ռուսաստանը եւ թելադրում իր պայմանները: Դա վերաբերում է ինչպես էներգետիկային, այնպես էլ՝ օդային եւ տրանսպորտային մյուս հաղորդակցություններին:

- Ձեր հարցազրույցներից մեկում նշել էիք, որ ստորագրած համաձայնագիրը նույն Վրաստանի հետ առեւտրի ոլորտում շատ հիմնախնդիրներ կկարգավորի, սակայն հայտնի է, որ «Եվրամիության եւ Հայաստանի միջեւ համապարփակ եւ ընդլայնված գործունեության մասին համաձայնագիրը չի նախատեսում Եվրամիության հետ ազատ առեւտուր: Եթե այդպես է, ապա ինչպե՞ս կարող է դյուրացնել Հայաստանի համար, ասենք, նույն Վրաստանի հետ առեւտուրը:

- Այո, համաձայն եմ: Հնարավոր է ծեւականորեն այդպես էլ լինի, սակայն Եվրասիական միությունում առկա խաղի կանոնները այնպիսի ոլորտներում այլընտրանքի ծագումը, ինչպիսին օդային հաղորդակցությունն է կամ էներգետիկան, որոշակիորեն կդյուրացնի Հայաստանի վիճակը: Այստեղ խոսքը չի վերաբերում բարձր կամ ցածր հարկերին, խոսքը այլընտրանքի ծագումից օգտվելն է:

- Ռուսաստանը Հայաստանում հիմնախնդիրներ չունի: Ռուսաստանի խնդիրը Հայաստանում իր ռազմակայանների եւ դրանց այդտեղ գտնվելն ապահովելն է: Ավելին, Եվրոպան Հայաստանում, առանձին ոլորտներում, կարող է մրցակցել Ռուսաստանի հետ, սակայն անհասկանալի է, թե ինչ կասկածներ եւ ռիսկեր կարող է ունենալ Ռուսաստանը:

- Գիտեք, Ռուսաստանը միշտ վախ է ունեցել, նրանք չեն ցանկանում, որ Հայաստանն ուրիշների հետ համագործակցի, քանի որ նրանք մշտական վախ ունեն: Նրանց հարցնում եմ, թե իրենք ի՞նչ են առաջարկում մեր տնտեսական հիմնախնդիրների կարգավորման համար: Նրանց պատասխանը հետեւյալն է՝ մեր գործը չէ, թե ինչպես կկարգավորվի ձեր հիմնախնդիրը: Կարծես թե, Ռուսաստանը օրինականորեն է գործում այն տեսանկյունից, որ ուղղակի ասում է՝ մենք ձեզ օգնելու հնարավորություն չունենք, այնպես որ, ինքներդ ձեզ օգնեք: Եվ եթե այդպես է, ապա Հայաստանն էլ այդ պատճառով Եվրամիության հետ ստորագրեց համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: Հայաստանը Եվրամիության հետ համաձայնագիրը ստիպված ծեւակերպեց, քանի որ Մոսկվան Հայաստանին կարգավորման համար ոչինչ չառաջարկեց: Ռուսաստանը Հայաստանին առաջարկեց անդամակցել Եվրասիական միությանը: Մենք անդամակցեցինք: Երեւանի այդ քայլը Հայաստանին բացասականից բացի, ոչինչ չտվեց: Դա խոստովանում են նաեւ իշխանության ներկայացուցիչները:

Պաշտոնական Երեւանի փաստարկը հետեւյալն է, եթե Հայաստանը դուրս գա Եվրասիական միությունից, ռուսները կնեղանան եւ, հետեւաբար, Հայաստանի անվտանգության հարցերը կդառնան հրատապ: Նման պատասխան լսելիս, ինձ մոտ ծագում է հարց՝ Հայաստանում ռուսական ռազմակայանի գտնվելը չի կարգավորվում Եվրասիական միությունում Հայաստանի գտնվելով, այն կարգավորվում է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ երկկողմ համաձայնության հիման վրա: Հայաստանը «Կոլեկտիվ անվտանգության համաձայնագրի» անդամ է, հետեւաբար, ռազմական ոլորտում առկա համաձայնագրերը ոչ ոք կասկածի տակ չի դնում, ուստի Եվրասիական միությունում Հայաստանի գտնվելն առանց այդ էլ նախատեսում է Հայաստանի անվտանգության հարցերի կարգավորում:

Եթե Ռուսաստանը չի ցանկանում, որ Հայաստանը առավել համագործակցի Եվրամիության հետ, այդ դեպքում, Ռուսաստանին առավել պետք է մտահոգեն Հայաստանի հիմնախնդիրները, եւ նրան պետք է օգնի տնտեսական հիմնախնդիրների կարգավորման գործում, քանի որ Եվրասիական միությունում առկա տնտեսական համակարգերը չեն գործում եւ, միաժամանակ, Ռուսաստանը մեզ ասում է, որ տնտեսական ոլորտում ինքն օգնել չի կարող, քանի որ ինքն էլ հիմնախնդիրներ ունի: Նման պայմաններում, մեր պատասխանը հետեւյալն է՝ մի' արգելակիր մեր քայլերը, թե ինչպես ենք փրկվելու:

Մեր տրամաբանությունը պարզ է: Այն չի նշանակում, որ Հայաստանը շրջվում է Ռուսաստանից: Հայաստանում կան ռուսական ռազմակայաններ, ռուս սահմանապահները գտնվում են Հայաստանում: Ռուսաստանի հետ հարաբերությունները ոչ ոք կասկածի տակ չի վերցնում, սակայն մենք ասում ենք, տնտեսական հարցերում, առեւտրի հարցերում, Եվրասիական միությունը Հայաստանին գրեթե ոչինչ չի տալիս: Քանի որ Ռուսաստանը մեզ չի օգնում, մենք ասում ենք՝ քանի որ այդպես է, մեզ մի խանգարեք, ինքներս կփնտրենք տնտեսական զարգացման եւ փրկության ուղիները:

- Հարցազրույցի սկզբում նշեցիք, որ երկրի խորհրդարանում հնչեցին ձայներ Եվրասիական միությունից Հայաստանի դուրս գալու մասին: Որքանո՞վ է լուրջ խորհրդարանում նման տրամադրվածությունը:

- Հայաստանի խորհրդարանում, «Ելք» խմբակցության նախաձեռնությամբ, իրականացվեց այդ հարցի քննարկումը: Քննարկման նկատմամբ հետաքրքրությունը բավականին մեծ էր, քանի որ այն գտնվում էր հասարակության նշանակալի հատվածի ուշադրության տակ: Քանի որ խորհրդարանում կառավարող կուսակցությունը մեծամասնություն ունի, այդ պատճառով վերոնշյալ հարցը քննարկումից այն կողմ չանցավ, եւ դա հասկանալի է: Սակայն փաստը, որ այդ թեմայով խորհրդարանում անցկացվեց հիմնարար քննարկում, որին հետեւում էր Հայաստանի ողջ բնակչությունը, ինքնին նշանակալից փաստ է: Նրանց փաստարկները, ովքեր պահանջում են Եվրասիական միությունից Հայաստանի դուրս գալը, այդ թվում՝ եւ իմը, բավականին համոզիչ են: Ակնհայտ է, որ այդ մասին խոսելը վաղաժամ է, սակայն ինչպե՞ս կարծագանքի այդ քննարկմանը Ռուսաստանը...

Ընդհանրապես, բոլոր փաստարկները պետք է լսել ու քննարկել, այդ թվում՝ նաեւ նրանք, որոնք նախատեսում են Եվրասիական միությունում Հայաստանի գտնվելը: Դրանց մեծ մասն առնչվում է ոչ թե Հայաստանի էկոնոմիկային, այլ անվտանգության հետ կապված հարցերին: Շատերը գտնում են, որ նման քայլերի իրականացումը Ռուսաստանին կզայրացնի, ինչը տարածաշրջանում կբարդացնի իրավիճակը եւ հիմնախնդիրներ կծագեն Հայաստանի անվտանգության հետ կապված հարցերում:

ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ

ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԳՆԱՊԱԼԻ ՉԷ

Ինչպես հայտարարեց Եվրոպական եւ եվրանտլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով Վրաստանի պետնախարարի տեղակալ Արչիլ Կարաուլաշվիլին, գործնականում Եվրամիության հետ անայցեգրային պայմանակարգ ունեցող բոլոր երկրների մոտ երկրի տարածքում գտնվելու ժամկետի խախտման վիճակագրությունը գրեթե չի տարբերվում մեր վիճակագրությունից:

- Վիճակագրությունն այնքան էլ հաճելի չէ, սակայն՝ ոչ էլ տագնապալի: Գործնականում Եվրամիության հետ անայցեգրային պայմանակարգով գործող երկրներում ժամկետի խախտման վիճակագրությունը գրեթե նույնն է, նույնիսկ ավելի վատը, քան մեզ մոտ: Բնականաբար, մենք աշխատում ենք մեր քաղաքացիների տեղեկատվության մակարդակի բարձրացման ուղղությամբ, զերծ պահում այն սպառնալիքներից, որոնք կարող են ծագել անայցեգրային պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար: Անհրաժեշտ է մարդկանց պարզաբանել՝ պահանջել ապաստարան այն ժամանակ, երբ շատ երկրների կողմից Վրաստանը ճանաչված է որպես անվտանգ երկիր, գործնականում անիմաստ է: Փաստորեն, 100 տոկոսով անիմաստ է առանց որեւէ հիմնավորման ու արդյունքների ապաստարանի խնդրագրերի ներկայացումը, դրանով միայն ավելացվում է անցանկալի վիճակագրությունը,- հայտարարեց Արչիլ Կարաուլաշվիլին:

Նրա խոսքով, հիմնախնդրային են նաեւ Եվրամիության երկրներում Վրաստանի քաղաքացիների կողմից կատարած հանցագործությունները: Վրացական կողմը նման դեպքերում խստորեն արձագանքում է:

- Ներքին գործերի նախարարությունը ակտիվորեն համագործակցում է Եվրամիության անդամ երկրներում գործող իրենց գործընկերների հետ: Հետեւաբար, Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգին ոչինչ չի սպառնում,- ընդգծեց Արչիլ Կարաուլաշվիլին:

Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա մարտի 28-ից հոկտեմբերի 20-ը ներառյալ, Եվրամիության (Շենգենյան գոտու երկրների) առանց այցեգրի այցելության իրավունքից օգտվել է Վրաստանի 161885 քաղաքացի: Ուղեւորության երկրում գտնվելու 90-օրյա ժամկետը նրանցից խախտել է 9875-ը:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ